



ՏԱՊԴՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԿՈՒՅՑՈՒՄ • ՓՈՂԻ • ՅԱՄՈՒԿՈՒՄՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն
Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր**

Համագործակցության հուշագիր

Հայաստանի Հանրապետության Տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի և
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջև

ք. Երևան

29 նոյեմբեր 2019

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ի դեմս տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Գ. Գևորգյանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Դ. Գալոյանի,

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում ծառայած մարտահրավերներին դիմագրավելու կարողությունների ձևավորման, ամրապնդման, համալսարան-աշխատաշուկա համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը, ինչպես նաև կարևորելով հետազոտական աշխատանքներին և ոլորտում հանրային քաղաքականության իրականացման գործընթացին աջակցության նշանակությունը,

Գնահատելով Համալսարանի մասնագիտական ներուժը և Հանձնաժողովի գործունեության ընթացքում կուտակված փորձն ու կարողությունը,

Համոզված լինելով, որ ուսանողների ներգրավվածությունը Հանձնաժողովի աշխատանքներին կնպաստի նրանց գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, միաժամանակ գիտականորեն հիմնավորված որոշումների ընդունումն անհրաժեշտ հիմքեր կստեղծի դրանց գործնական կիրառման արդյունավետության բարձրացման համար՝

Համաձայնեցին կնքել սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր):

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հուշագրի նպատակն է ապահովել անհրաժեշտ համագործակցություն Համալսարանի հետազոտողների, ուսանողների և տնտեսական մրցակցության պաշտպանության իրականացման պատասխանատուների ու որոշում կայացնողների միջև՝ աջակցելով Հանձնաժողովի գործունեությանը և նպաստելով ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համագործակցությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- Համալսարանի ուսանողների փորձառությունների կազմակերպում Հանձնաժողովում,
- Հանձնաժողովի գործունեության տարբեր ոլորտներում, Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրություններում և այլ աշխատանքներում Համալսարանի հետազոտողների և ուսանողների ներգրավում,
- Համալսարանի և Հանձնաժողովի միջև փորձի երկկողմանի փոխանակում, այդ թվում՝ վերապատրաստումներ, համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կլոր սեղանների, սեմինարների, քննարկումների կազմակերպում:
- Համալսարանի կողմից իրականացված՝ ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, հակամրցակցային գործունեության կանխարգելման, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների, զեկույցների, հոդվածների ժողովածուների կամ այլ գիտակրթական նյութերի տրամադրում հանձնաժողովին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը իր հայեցողությամբ և ըստ անհրաժեշտության Համալսարանին է տրամադրում տնտեսական մրցակցության պաշտպանությանը վերաբերող հայեցակարգերի, ռազմավարական բնույթի փաստաթղթերի և (կամ) իրավական ակտերի նախագծերը, հրավիրում է Համալսարանի ներկայացուցիչներին Հանձնաժողովի աշխատանքային խորհրդակցություններին և այլ ձևաչափերով քննարկումներին մասնակցելու համար, ապահովում է ուսանողների փորձառությունների կազմակերպումը:

Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում հետազոտություն և (կամ) ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև Համալսարանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Հանձնաժողովը և Համալսարանի ղեկավար մարմինները՝ լիազորված ներկայացուցիչների միջոցով:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Հանձնաժողովի ու Համալսարանի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովի ու Համալսարանի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հուշագիրը գործում է հինգ տարի ժամկետով: Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել հանձնաժողովի ու Համալսարանի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր ծանուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Հուշագիրը Հանձնաժողովի և Համալսարանի համար չի առաջացնում պարտավորություններ, չի պարունակում պարտադիր կատարման ենթակա դրույթներ, այն հաստատում է վերջիններիս միջև համագործակցության ցանկությունը և պատրաստակամությունը:

Սույն հուշագիրը կազմված է հայերեն լեզվով երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ստորագրություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ

Ստորագրություն



ՏԱՊԴՅ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՇԴՄԱՆՈՒԹ
ՊԵՏԱԿԱՆ ՎԱՋԱՆՈՒՊՈՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԻՏԱԿԱՆ
ՎԱՋԱՆՈՒՊՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջև կնքված Համագործակցության հուշագրում լրացումներ կատարելու մասին

ք. Երևան

29 հուլիսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ի դեմս Հանձնաժողովի նախագահ Գ. Գևորգյանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս Համալսարանի ռեկտորի պարտականությունները կատարող Ա.Գրիգորյանի, հիմք ընդունելով Հանձնաժողովի և Համալսարանի միջև կնքված Համագործակցության հուշագրի «Փոփոխությունները և լրացումները» բաժնի կարգավորումները, համաձայնեցին կնքել սույն արձանագրությունը հետևյալի մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հանձնաժողովի կողմից Համալսարանին տրամադրված տեղեկատվության գաղտնիության վերաբերյալ

Համալսարանն իրավունք չունի Համագործակցության հուշագրի շրջանակներում Հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկությունները և փաստաթղթերը, այդ թվում՝ հայեցակարգերը, ռազմավարական բնույթի փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերը և (կամ) վերլուծական նյութերն օգտագործել ոչ ծառայողական նպատակներով, հրապարակել, տարածել, բացահայտել, տրամադրել կամ որևէ այլ կերպ հայտնի դարձնել դրանք երրորդ անձանց: Այս պահանջը Համալսարանի ներկայացուցիչները պարտավոր են պահպանել նաև աշխատանքային հարաբերություններն ավարտվելուց հետո:


Համալսարանը համագործակցության շրջանակում Հանձնաժողովից ստացված տեղեկությունները հետազոտության, ոլորտային ուսումնասիրություններ

իրականացնելու կամ որևէ այլ ծառայողական օգտագործման նպատակով կարող է հրապարակել միայն Հանձնաժողովի համաձայնությունը ստանալուց հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**


ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ


Ստորագրություն



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ**

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ


Ստորագրություն

